

ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՖԻԵԴԵՐԻԿ ՖԱՐՐԱՐԻ ՔԱՐՈՋՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՆԱՅ ՄԱՍՈՒՆՈՒՄ (1901-1902 ԹԹ.)

20-րդ դարասկզբի հայ մամուլում զգալի տեղ են գրավում մշակութային կյանքը լուսաբանող հրապարակումները: Մասնավորապես թերթերն ու ամսագրերն ունեին «Գիտություն և արվեստ», «Պարբերական հրատարակություններ», «Մատենագրություն» և այլ բաժիններ, որոնցում ընթերցողին տեղյակ էր պահվում մոր լույս տեսած գրական և գիտական երկերի, հայերեն թարգմանված ստեղծագործությունների մասին: Ընդ որում, դրանք սոսկ տեղեկություններ չէին: Հոգվածագիրները հաճախ զնահատում էին տվյալ գործը, վեր հանում բովանդակային, լեզվաոճական շերտերը, մշում դրական կողմերն ու թերությունները: Մի շարք դեպքերում գրախոսությունն առաջ էր բերում արձագանքներ, թեր և դեմ կարծիքներ, որոնք հանգեցնում էին մաս գրական բանավեճերի ու բանակոխվումների:

1901 թ. մշակավոր մանկավարժ և հոգեբան Սեդրակ Մանդինյանի թարգմանությամբ վաղարշապատում լույս տեսավ անգլիացի հոգևորական գործիչ Ֆրեդերիկ Ֆարրարի¹ քարոզների գիրքը («Ֆարրարի քարոզներ»):

Առաջին գրախոսությունը թարգմանության մասին տպագրեց «Նոր-Ռարը» 1901 թ. հունիսին (N 93), Էմմ. քահ. Նազարյանի ստորագրությամբ: Պատասխան հոդվածով («Նամակ խմբագրության») մույն թերթում (N 109) հանդես եկավ Ս. Մանդինյանը:

Սկսված բանակոխին արձագանքեց Գարեգին վրդ. Հովսեփյանը, այնուհետև իրենց հիդրոդրոշումները կրկին ներկայացրեցին առաջին գրախոսը և թարգմանիչը:

1901 թ. հուլիսին «Մուրճի» 7-րդ համարում տպագրվեց մոր գրախոսություն «Ֆարրարի քարոզների» մասին: Հեղինակը՝ Լ.-ն (Լեոն - Դ.Պ.), որն այդ ժամանակ հավասարապես թղթակցում էր «Մուրճ»-ին և «Մշակ»-ին, շեշտում է թարգմանության ժամանակավրեպ լինելու հանգամանքը՝ համապատասխան բացատրություններով: Գրախոսի դրույթների հանգամանակից վերլուծությամբ և հակափաստարկներով անմիջապես հանդես են գալիս «Արարատ» և «Լույս» ամսագրերը:

Վեց ամիս տևած բանավեճի (բանակոխի) ընթացքում լույս են տեսնում շուրջ 15 հրապարակումներ, քննարկումներին մասնակցում էին «Նոր-Ռարը», «Մուրճը», «Մշակը».

¹ Ֆրեդերիկ Ֆարրարը 19-րդ դարի վերջին և 20-րդի սկզբին մեծ հեղինակություն էր վայելում եվրոպայում ու Ամերիկայում: Նա հոնտորական ձիրք ունեցող քարոզիչ էր, մի շարք ուշագրավ աշխատությունների հեղինակ: Դրանց զգալի մասը 1870-1880-ական թվականներին թարգմանվել էին մաս հոսերեն: Ավելի մանրամասն տե՛ս Брокгауз Ф. А., Эфрон И. А., Энциклопедический словарь, т. 35, стр., 325.

«Արարատը», «Լուման»: Թարգմանված գրքի առիթով մամուլի լայն արձագանքը վկայում էր ազգային կյանքին հուզող կարևոր մի մտահոգության մասին, որ ի հայտ էր եկել մոր ժամանակներ-ազգային բարոյականություն-հասարակական-քաղաքական հարաբերություններ համատեքստում:

Բանակցիվն ըստ էության ներառում է երկու փուլ. առաջինում վեճերն ու քննարկումներն ընթանում էին «Նոր-Ռար» թերթի էջերում, երկրորդ փուլում հակադիր տեսակետներով միմյանց դեմ դուրս էին եկել մի կողմից՝ «Մուրճը», «Մշակը», և մյուս կողմից՝ «Արարատն» ու «Լուման»: Առաջին փուլում քննարկումը ծավալվում է հիմնականում թարգմանական խնդիրների շուրջ, երկրորդ փուլում առաջնային են դառնում մասնակիցների գաղափարական տարաձայնությունները: Բանակցիվն անդրադարձող վերջին հոդվածը՝ Ս. Մանդիմյանի «Թարգմանության ծաղիկները» («Լումա», N 1, 2, 1902), փորձ է՝ ընթերցողների ուշադրությունը վերստին սևեռելու թարգմանական հիմնախնդիրների վրա:

Առաջին փուլի բանավիճային քննարկումներին հիմնական տոն տվողը էմմ. քահ. Նազարյանն էր: Ընդ որում, ապրելով և գործունեություն ծավալելով Մոսկվայում՝ նա «Նոր-Ռար» լրագրի միջոցով մասնակցում էր արևելահայ գրական-մշակութային կյանքին:

Նազարյանը ողջունում է «Ֆարրարի քարոզների» լույս ընծայումը հայերեն լեզվով, վեր հանում դրանց բովանդակային շերտերից բխող գաղափարական արժանիքները, նաև այն, որ այդ քարոզները դրական ներգործություն կունենան հայ հոգևոր մտածողության վրա («Նոր-Ռար», 1901, 6 հունիսի, N 93): Գրախոսն առանձնակի ուրախությամբ ընդգծում է թարգմանչի՝ հոգևորականներին գիրքը ձրի բաժանելու պատրաստականությունը: Այնուհետև անդրադառնալով թարգմանության լեզվական թերություններին՝ հանգամանորեն (12 կետով) մշտում է դրանք և ապա եզրակացնում. «Բայց, Աստված սիրեք, խնայեցեք հայոց լեզուն: Խոչ ու խութեր մի ստեղծեք բնագրի գեղեցկությունները, ինչպես հարկն է, վայելելու դեմ»:

Սովորաբար քննադատության հանդեպ կանխակալ տրամադրված հեղինակներն իրենց պատասխաններում հատուկ ուշադրություն են դարձնում գրվածի այն տողի կամ տողերի վրա, որոնք հակառակորդի կողմից համեմատաբար խիստ են ասված, բայց և մրա ասելիքը ներկայացնող հիմնական դրույթը չեն: Հիմնական դրույթի մեմանտիկա ձևափոխումը հանգեցնում է նաև հակառակորդի ասելիքի խեղաթուրման²: Ս. Մանդիմյանն իր պատասխան հոդվածում, կամա թե ակամա, մեծ կեցվածք էր որդեգրել, քանզի անտեսելով գրախոսության հիմնական դրույթն ու փաստարկները, իր մտքերը զարգացնում է Նազարյանի «Աստված սիրեք, խնայեցեք հայոց լեզուն» ձևակերպման շուրջ: Այդ իսկ պատճառով Մանդիմյանի փաստարկներն առավելապես քննադատությունից վիրավորված հեղինակի ինքնապաշտպանական խոսքեր են: Նշված 12 թերությունների դեմ ոչ մի կոնկրետ հակաճառություն:

² Բանավեճի տեսության մեջ այս հնարքն անվանում են թեզի (դրույթի) նեգափոխում, որը դասվում է անթույլատրելի հնարքների շարքը. տե՛ս մասնավորապես А. А. Ивип, Искусство правильно мыслить, М., Просвещение, 1986, М. Слемпев, В. Васильков, Диалектика спора, Минск, 1990, К. Г. Павлова, Психология спора, логико-психологические аспекты, Владивосток, 1988 գրքերը:

խնդրին ուրույն դիտարկությունով է մոտենում Գարեգին վրդ. Հովսեփյանն իր «Ֆարրարի քարոզները (նամակ խմբագրության)» փոքրիկ հոդվածում («Նոր-Դար», 1901, 6 հուլիսի, N 113): Նա ևս չի անդրադառնում Նազարյանի նշած թերություններին, ավելին՝ զիրքը համարում է «հայոց թարգմանական գրականության մեջ լավագույններից մեկը», գտնում է, որ Մանդիմյանից ավելի արժանավոր թարգմանիչ հնարավոր էլ չէր գտնել: Թարգմանչի հասցեին ուղղված գովեստի խոսքերը խորքում թերևս ներքին մի մտահոգություն ունեին: Հովսեփյանն ուրախ էր անգլիացի հոգևորականի բարձրակարգ ստեղծագործությունները հայերեն թարգմանված տեսնելու համար և առաջնայինը տվյալ դեպքում համարում էր ընթերցողների հնարավորինս մեծ լսարան ապահովելը: Այնինչ Նազարյանի նշած լեզվաբանական թերություններն ընթերցողին կարող էին շեղել բուն խնդրից և զրկել նրան հեղինակի «նուրբ և վսեմ մտածության եղանակը» վայելելուց:

«Նոր-Դարի» հուլիսի 27-ի համարում (N 121) իր դիտարկումներով կրկին հանդես է գալիս Էմմ. քահ. Նազարյանը: Ուշագրավ մի հանգամանք. իրավացիորեն նշելով, թե Մանդիմյանն իզուր է նեղացել իր «Աստված սիրեք, խնայեցեք հայոց լեզուն» խոսքից, Նազարյանն ինքն էլ ընկնում է նմանատիպ մի ծուղակի մեջ: Նա մեջ է բերում Մանդիմյանի «Ես իմն ասեցի. հիմա դուք էլ ձերն ասացեք, տեսնեմք, թե բանից ինչ բան է դուրս գալիս» մարտահրավեր խոսքը և իր դատողությունները հիմնականում հանգուցում է դրա շուրջ: Այլ խոսքով՝ երկուստեք նեղացնում են բանակովի շրջանակները, անձնական համակրանք-հակակրանքի հոգեբանական օղակը մասնակիցներին հնարավորություն չի տալիս ծավալվելու թարգմանական խնդիրների, այդ ընթացքում ի հայտ եկած լեզվաբանական թերությունների և նմանաբնույթ այլ հարցերի շուրջ: Ուստի «Նոր-Դարի» N 131-ում (18 օգոստոսի, 1901) Ս. Մանդիմյանի տպագրած «Իմ կրիտիկոսներին» պատասխանը, Էմմ. քահ. Նազարյանի հետ կապված, նախորդ ասածներին նոր բան չի ավելացնում: Հոդվածի երկրորդ մասում հեղինակը բանավիճում է «Մուրճի» քննադատի դեմ: Բայց սա արդեն վերաբերում է երկրորդ փուլին:

Նոր փուլի առաջին հրապարակումը «Մուրճ» ամսագրի 1901 թ. 7-րդ համարում Լ.-ի տպագրած «Ֆարրարի քարոզներ» գրախոսությունն է: Բանակոխվել տեղափոխվում է այլ հարթություն: Երկրորդ պլան են մղվում թարգմանության լեզվի հետ կապված քննարկումները, քանի որ «Մուրճի» գրախոսը նախ և առաջ քննում է գրականություն-ծողովորդ փոխհարաբերությունների համատեքստում մեր գրականության նպատակի, բովանդակության և ուղղվածության հետ կապված խնդիրներ:

Լեոն լիբերալ-բուրժուական հոսանքի հետևողական ներկայացուցիչներից էր և 20-րդ դարակազմի դեռևս շարունակում էր հավատարիմ մնալ գրականությունը, գրական երկերը «հասարակական օգուտի» տեսանկյունով քննելու արծրունիական դիրքորոշմանը³: Այս մոտեցմամբ էլ նա փորձում է արժեկորել Ս. Մանդիմյանի թարգմանությունը: Որպես թիրախ ընտրելով «Ֆարրարի քարոզների» հայերեն հրատարակությունը՝ Լեոն փորձում է

³ Ի դեպ, Լեոն դեռևս 19-րդ դարի վերջին իր ուսուցչի՝ Գ. Արծրունու հետ միասին գաղափարական հոսանքների ներկայացուցիչներին մամուլի էջերում բնութագրում էր իբրև առաջադիմականներ և խավարամիտներ. մնամ մոտեցումը զգալիորեն նեղացնում էր հասարակական գործիչների հայացքների և գործունեության շրջանակները:

վեր հանել հայ ժողովրդի «հետամնացության» պատճառները և գլխավորներից մեկը համարում է այն, որ մեր գրականությունը ժողովրդի զարգացմանը համընթաց չի գնացել, շարունակ ի հայտ են եկել աստվածաբանական բազմաթիվ գրքեր, որոնք խանգարել են հայ մարդուն «հասկացող, ինքնաճանաչ քաղաքացի» դառնալու: Այնուհետև եզրակացնում է. «Մեր հոգու համար անթիվ ու անհամար գործեր, իսկ մեր մտքի, մեր խելքի համար - գրեթե ոչինչ...» («Ֆարրարի քարոզներ», «Մուրճ», 1901, N 7, էջ 163):

Հոգու և մտքի գործառնությունների մասն առանձնացումն ինքնին հակասական եզրակացության արդյունք է, քանի որ տրամաբանական իմաստավորում չի ստանում. գիրքն իր բովանդակությամբ պետք է բավարարի հոգու և մտքի պահանջները միաժամանակ: Ուստի պարզունակ է հնչում հեղինակի «Մի» թե մեր ընթերցող հասարակությունը այդպիսի գրքերի է կարոտ» հոետորական հարցը: Իր չհիմնավորված դրույթին և փաստարկներին Լեոն այնուհետև հուզական երանգ է հաղորդում՝ փորձելով ազդել խոսքի հոգեբանական ուժով. «Ափսո՛ւ աշխատանք, ափսո՛ւ վատնած փող»: Գրախոսի փաստարկումները շարունակվում են այս մակարդակով՝ ի ցույց դնելով նրա մտածողության ներքին հակասությունները:

Լեոյի հողվածի առաջին պատասխանը տպագրվում է «Արարատ» ամսագրի 1901 թ. է և Ը համարներում: Այն ամստորագիր է և վերնագրված է՝ «Հակասություններ»: Հեղինակը հիմնավոր քննության է ենթարկում Լեոյի բերած փաստարկները: Դրանց կապակցությամբ արված դիտողություններն ու եզրահանգումներն ավելի համոզիչ են, քանի որ հիմնվում են հետևյալ հակափաստարկների վրա.

ա) Եթե Անգլիայի պես «լուսավոր ու առաջադեմ աշխարհում» մասն Քարոզգրքերը ժողովրդի մեջ մեծ պահանջարկ ունեն, ապա բնական է, որ կհետաքրքրեն նաև հայ քրիստոնյա ընթերցողին:

բ) Լեոն նշում էր, որ «կարդացող և հասկացող տերտերներ չունենք»: Այդ դեպքում, ըստ «Արարատի» հողվածագրի, նրանք էլ ումի՞ց քարոզել պետք է սովորեն, եթե ոչ Ֆարրարի մասն եկրոպական բարձրակարգ քարոզիչներից:

գ) Վերջին տարիներին հայ իրականության մեջ տնտեսական կյանքի աշխուժացումն առկա է, արդյունաբերության զարգացումը, կապիտալի մուտքը փոխել են հայ գյուղի դեմքը, ըստ այդմ մեծացել է նյութական շահի նկատմամբ ժողովրդի ձգտումը, որը դրական առումով կենսամակարդակի փոփոխությունն առաջ բերելով, նաև բարոյական լուրջ վնասներ է հասցրել հայ մարդուն: Նման պայմաններում, շարունակում է հողվածագիրը, «ավելի գործնական և անհրաժեշտ խնդիր կա՞ միթե մեր ժողովրդի համար, քան նրա բարոյապես և հոգեպես բարձրանալուն նպաստելը» («Հակասություններ», «Արարատ», 1901, N է և Ը, էջ 352): Ուստի կենդանի, ճշմարիտ ավետարանական խոսքից բացի մասն Քարոզգրքերի թարգմանությունը նույնպես անհրաժեշտություն է:

Լեոն, իհարկե, անպատասխան չի թողնում «Արարատի» հողվածագրին: «Մուրճի» 1901 թ. N 9-ում տպագրվում է նրա «Կղերական սոփեստություններ (երկու խոսք «Արարատին»)» հողվածը: Այն, ինչ ասվեց թեզի նենգափոխման մասին բանակրվի առաջին փուլում, Լեոյի այս պատասխանի մեջ ի հայտ է եկել տարաբնույթ դրսևորումներով: Ավելին, դրանք նա «համեմել է» հակառակորդի հասցեին ուղղված վիրավորական պիտակներով:

Հոդվածում բերված բացատրությունները, պատճառաբանություններն ու դիտողությունները գրված են այն ընդհանուր ֆոնի վրա, որի սկիզբը, ընթացքն ու ավարտը հետևյալ պատկերն ունեն. «Արարատը» փրփուրը բերանին հրապարակ է մետվել իմ «հանցանքը» պատժելու...», «ողորմելիներ», «դուք, ողորմելի միջակություններդ», «կղերականությունը պատժելու...», «ողորմելիներ», «դուք, ողորմելի միջակություններդ», «կղերականությունը պատժելու...», «ողորմելիներ», «դուք, ողորմելի միջակություններդ», «կղերականությունը պատժելու...» (Մուրճ, 1901, N 9, էջ 258-261):

Բնութագրումների մեծ շարանը, ցավոք, լրջություն չի հաղորդում մահ իր գաղափարական դիրքորոշումը վերստին հաստատելու համար հեղինակի բերած մի շարք պատճառաբանություններին: Եվ պատահական չէ, որ «Արարատի» հաջորդ համաշարք «Լուրջ դիտողություններ» հոդվածի հեղինակը՝ Կ. Վ.-ն (Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը), որը, պարզվում է, մահ մատուցող հրապարակման հեղինակն է, ստիպված է սթափվելու և զգաստանալու կոչ ուղղել Լեոյին: Կտրականապես մերժելով վերջինիս հոդվածների հայհոյախառն բնույթը՝ Կ. Վ.-ն, դրա հետ մեկտեղ, առիթը չի կորցնում մեկ անգամ ևս բացահայտելու նրա դատողությունների մերժում հակասականությունը և եզրափակում է. «Մեր վերջին խոսքն ու խորհուրդն այս է. եթե պահանջ եք զգում, որ լրջությամբ վերաբերվին դեպի Ձեր քննադատությունները՝ ինքներդ փոքր-ինչ ավելի լուրջ, արդարամիտ, լայնհորտ և բազմակողմանի եղեք. ամենից առաջ՝ ավելի պատշաճ լեզու՝ գործ դրեք» («Արարատ», 1901, N Թ և Ժ, էջ 450):

«Մուրճի» հոդվածագրի դեմ առավել կտրուկ դիրքորոշմամբ հանդես է գալիս «Լուսման», որտեղ տպագրված անստորագիր հոդվածում («Ֆարրարի թարգմանությունները և նորա քննադատները», 1901, Գիրք Բ) քննադատությունն ու հասցվող վիրավորանքը համարժեքորեն ձայնակցում են իրար: Նախ՝ քննադատության մասին: Այս առումով «Լուսման» և «Արարատը» համակարծիք են: «Լուսմայի» հոդվածագիրը մույնպես գտնում է, որ Լեոյի հոդվածը լեցուն է հակասական մտքերով. վերջինս, ժխտելով քարոզների կամ քարոզագրքերի անհրաժեշտությունը, հանգում է նյութականի գովերգմանը, մերժելով Որոտնեցու կամ Տաթևացու գաղափարների ոգին՝ ականա դառնում է «կրեստների քաղաք» Բաքվի «քարոզական ակտավորության» քարոզիչ:

Հոդվածագրի քննադատական կիրքը որոշ դեպքերում անցնում է մահ պատշաճության սահմանները: Մի դեպքում մահ Լեոյի մահ քննադատների հարձակումը մահանցնում է լուսնի դեմ «փոքրիկ գիշերապահների ձայնական պատերազմի» (լուսնահաչ), մեկ այլ դեպքում «Մուրճի» հոդվածագրին անվանում Լյու՝ ինչ-ինչ նկատառումներով, իսկ երրորդ դեպքում՝ համարյա թե կոնկրետ մեղադրանք բարդում նրա հասցեին. «Հայ ժողովրդի նյութական բարիքը միայն քարոզող մի այլ Լ. կամ ո՛ր գիտն, զուցե մույն Լյուն, 900 ոտբլու հաշիվ ունի տալու մի աղքատիկ վարժարանի, մահ «հմտելիզեմտներ»-ը, որոնցով լցվեցավ մեր կյանքը, ինչ ձգտումներ, ինչ կյանք, ինչ բարեմասություններ ունին, որ ինչ արդյունք տան, ինչ հիշատակ թողնեն հետնորդներին» («Լուսման», 1901, Գիրք Բ, էջ 468-469):

Այս մեղադրամբը ստիպում է Լեոյին կրկին հանդես գալու «Մուրճում»: «Պարբերական հրատարակություններ» խորագրի ներքո անդրադառնալով «Լուսնային» և հիշյալ հոդվածին՝ Լեոն այս անգամ ինքն է բողոքում, որ «Արարատը» և «Լուսն» դուրս են եկել գրական վայելչության կանոններից, այնուհետև առանձնակի վրդովմունքով կանգ է առնում «Լուսնայի» կողմից հիշատակված դրամական գումարի (900 ռուբլի) փաստի վրա: «Հոդվածը անստորագիր է և պատասխանատվությունը ընկնում է Գյուտ քահանայի վրա: Ուստի մենք էլ հրավիրում ենք նրան պատասխանի. պահանջում ենք հայտնել, թե ի՞նչ են նշանակում այդ խոսքերը» («Մուրճ», 1901, N 11, էջ 262): Մեզ հայտնի չէ, թե ինչ պատասխան է ստացել Լեոն Գյուտ քահանայից, սակայն տվյալ դեպքում առավել մտահոգիչը երևույթի տգեղ դրսևորումն էր. բանակոխվել իջել էր անձնական փոխադարձ մեղադրամբների մակարդակին և դրանով իսկ սպառել իրեն:

Վերջին արձագանքը Ս. Մանդիկյանի «Թարգմանության ծաղիկներ» հոդվածն է, որը տպագրվեց «Լուսնայի» 1902 թ. առաջին, երկրորդ համարներում: Հեղինակն այստեղ առաջ է քաշում թարգմանության հետ կապված մտահոգություններ, նշում, որ հայ ինքնուրույն և թարգմանական գրականության վիճակը մեր մտավորականներին չի հետաքրքրում: Ավելին, նրանցից շատերն ընթերցում են հիմնականում ռուսերեն գրքեր ու պարբերականներ, այդ պատճառով էլ, ըստ Մանդիկյանի, «Մենք ունինք ինտելիգենտ գրող, բայց չունինք ինտելիգենտ կարդացող» («Լուսն», 1902, N 1, էջ 181): Թարգմանության ոչ բարվոր վիճակը ի ցույց դնելու նպատակով հոդվածագիրը վերջում ընթերցողներին է ներկայացնում «Մշակում» տպագրված թարգմանական մի հատված և դրան զուգահեռ դնում նույն հատվածը՝ իր սրբագրությամբ:

Բանակոխվել և հատկապես նրա առաջին փուլը թերևս այլ ընթացք ունենային, եթե Մանդիկյանը, բանավիճելով Լեոյին. քահ. Նազարյանի հետ, ընդուներ կամ հերքեր նրա նշած 12 դիտողությունները համապատասխան պատճառաբանություններով: Ինչևէ: Տարածայնությունների արդյունքում թեև կողմերն ընդհանուր հայտարարի չեկան, սակայն հստակվեցին մի շարք խնդիրներ, որոնք բնորոշ էին թե՛ հայ հոգևորական և մտավորական խավերի մտածողությանն ու գաղափարական դիրքորոշումներին ընդհանրապես և թե՛ բանակոխվի կոնկրետ ընթացքին ու նրա դրսևորումներին մասնավորապես:

Նախ, տվյալ ժամանակահատվածը, այսինքն՝ 20-րդ դարասկիզբը, հայ ժողովրդին վերջստին առնչում էր հոգևոր և մտավոր ինքնահաստատման գործընթացներին: Մի դեպքում ֆիզիկական գոյատևման հրամայականն արևելահայ իրականության մեջ արձագանքում էր տնտեսական և արտադրական հարաբերությունների նոր դրսևորումներին, մեկ այլ դեպքում ազգի՝ բարոյական ավանդույթներով ձևավորված հոգեբանությունը ծառանդում էր գաղափարախոսական նոր հովերի դեմ:

«Ֆարրարի քարոզների» հայերեն թարգմանության բուռն արձագանքները, հատկապես բանակոխվի երկրորդ փուլում, վկայում էին, որ ազգային ինքնության որոշ «չափորոշիչներ» կրկին հաստատելու անհրաժեշտություն էր առաջացել: Իհարկե, առիթը Լեոյի՝ ծայրահեղության միտված քննադատական դիտողություններն էին, բայց հոգևորի հանդեպ «ոտնձգությունը» վրդովել էր հատկապես հոգևորականներին: Նրանց դիրքորոշումը տվյալ դեպքում առավել սթափ էր, հավասարակշռված, գաղափարական առումով՝ զերծ

ծայրահեղություններից: Բանակովի ընթացքում Լեռյի կողմից անգափոխված իր միտքը վերահաստատելու նպատակով «Արարատի» հողվածագիրը գրում էր. «Հետևի՛ր քո նյութական բարօրությանը, աշխատի՛ր յուրացնել քաղաքակրթության բարիքները և խոհեմությամբ ու հեռատեսությամբ բարեկեցիկ կյանքի պայմաններ ստեղծել քեզ համար, բայց առանց քո ազգային-հոգևոր ինքնությունությունը կորցնելու...» (Կ. Վ., Լուրջ դիտողություններ, «Արարատ», 1901, N Թ և Ժ, էջ 447):

Բանակովի առաջին և երկրորդ փուլերն ունեին իրենց ընդհանուր կողմերն ու տարբերությունները: Առաջինում գերիշխող է թարգմանությունների հետ կապված խնդիրների բանավիճային քննարկումը, երկրորդում՝ գաղափարների, մոտեցումների պայքարը: Առաջինում մտքերի բախումը ծայրահեղ շիկացման չի հասնում, երկրորդում բախումը ոչ միայն շիկանում, այլև իջնում է անձնական փոխադարձ վիրավորանքների, մահ մեղադրանքների մակարդակի: Առաջին փուլում ակտիվ է թարգմանության հեղինակը՝ Սեդրակ Մանդիկյանը, երկրորդում առավել գործունե են «Արարատ» և «Լուսնա» ամսագրերը:

Երկու փուլերի ընդհանրության մեջ առավել ուշագրավն այն ոգևորությունն է, որ դրսևորում են գրախոսները թարգմանության առիթով: Առաջին փուլում ոգևորված գրախոսի (Գարգին վրդ. Հովսեփյան) տրամադրությանը համահունչ են երկրորդ փուլում «Արարատի», «Լուսնայի» հողվածագիրների դատողությունները: Ի դեպ, նրանք համամիտ էին մահ այն բանում, որ թարգմանությունը լեզվական առումով զերծ չէ որոշ թերություններից:

Մեկ այլ հետաքրքիր իրողությունն ևս: Թեև թարգմանված գիրքը ներառում էր անգլիացի հոգևորական գործչի քարոզները, սակայն գրախոսություններից և հողվածներից ոչ մեկում խոսք չկա վերջինիս կրոնական դավանանքի մասին (նկատենք, որ Ֆարրարն Անգլիկան Եկեղեցու ներկայացուցիչ էր): Հատկապես երկրորդ փուլում ուշադրության կենտրոնում գրքի արդիական կամ ժամանակավորեայ լինելու հանգամանքն է, որի շուրջ բանավիճում էին հողվածագիրները՝ սկեռելով իրենց մտորումներն ազգային մտածողության և հոգեբանության առանցքային խնդիրների վրա: «Հարկավո՞ր են մեմանատիպ գրքերը հայ ընթերցողին» հարցին հոգևորականները, մահ պահպանողական մամուլը («Արարատ», «Լուսնա») միանշանակորեն դրական պատասխան էին տալիս, հակառակն էին պնդում լիբերալ-բուրժուական մտածողության տեր գործիչները (Լեո և համախոհներ):

Ի վերջո, ակներև էր հետևյալ փաստը. թարգմանության շուրջ ծավալված բանակովին մասնակցում էին մամուլի առնվազն հինգ օրգաններ: Սրանցից յուրաքանչյուրն ընթերցողների իր լսարանն ուներ, որոնք մտքերի փոխանակության և բախումների ամուղղակի մասնակիցներն էին: Նրանց հետաքրքրությունը գրքի նկատմամբ և այն ընթերցելու ցանկությունը, տպագրվող բանավիճային հրապարակումների հետ կապված, բնական է, որ պետք է մեծամար: Եվ մեծան պարագայում թերևս ժամանակավորեայ է դառնում Լեռյի հուզական բացականչությունը՝ «Ափսո՛ս աշխատանք, ափսո՛ս վատնած փող»: Թեկուզև այս բանակովի միջոցով «Ֆարրարի քարոզների» համար ընթերցողների որոշակի լսարանն արդեն իսկ ապահովված էր...